Սիպիլ

Պարուհին

Մեծ սրրահը «կեցցե»-ներով կը գոռա.
Վարսերն երկար կը վետվետին ուսն ի վար,
Քողին վրա, զանակներե փոսուռա,
Ոսկի թելեր կը կայծկլտան լուսավառ:
Մինչ կը կայթե վես պարուհին, կը ճրկի,
Պարիկ մրն է կարծես ճարտար համբարու,
Որ կը սուրա մոլուցքովը կայծակի,
Ցրցքնելով ծիածաններ ակնառու:
Թաթիկները, բամբիոնները կ՚ընդհարին,
Նազանքներով ժապավեններ կ՚երկննան,
Կը փաթթըվին թույլ թափերովը պարին:
Տոտիկներն ալ թիթեռնիկներ են գարնան,
Անոնց նման ճերմակ, քնքուշ ու թեթև,
Անոնց նման սըլացք կ՚առնեն օդին մեջ,
Այդ սըլացքը հորձանք մրն է հարաատև,
Փողփողում մը դոհարներու, լույս անշեջ,
Որոնք ուլեն, գլխեն, լանջքեն կը ցայտեն:
Եվ շատերը իր զարդերուն կը բաղձան,
Այն վարդերուն՝ որ կը թափին իր այտեն,
Հուր նայվածքին՝ զոր կը սրսկե ցիր ու ցան:
«Ո՜հ, ի՞նչ հեշտ է կյանքը իրեն, ամբո՜ղջ պար,
«Կը մրմնջեն օթյակներեն, ամբո՜ղջ խաղ.
«Չունի ձանձրույթ, ոչ ալ հոգեր վայրապար.

«Իր կյանքն իրավ երկար անուրջ մ՚է չքնաղ:
«Ամեն քայլին կը քաղե ծափ ու ծաղիկ,
«Շուրջն ամեն բան կը ծիծաղի, կը խնդա,
«Եվ լույսի մեջ կ՚անցնին օրերն երջանիկ:»

Եվ սրրահը «կեցցե»ներով կը թնդա,
Բայց ծափերը մինչ կը դոռան շարունակ,
Ծամերն երկար կը գալարին օդայած,
Մինչ կը ծրփա գլուխն, աղվոր դարդմանակ,
Իր հոգին ալ կը գալարի քայքայված:
Իր խոլ դարձքը՝ արշավն է խեղճ տերևին
Զոր մրրրիկը կը հալածե փոսն ի վար,
Բունեն զատված, ցամքած, թոռմած կիսովին,
Միշտ կը թրռի ու կը թրռի հողմավար:
Այսպես թալուկ մ'է այդ պարը մոլեգին,
Մահվան կայթ մը զոր ուրու մը կը պարե,
Թրշվառ կին մը որուն այրած է հոգին,
Թեև օծված են վարսերը համպարե:
Մայր մրն է ան, մայր մը սրտեն զարնրված,
Որուն զավակն անկողնին մեջ կը մեռնի:
Այդ ծափերը ապտակներ են, ո՛վ Աստված,
Զոր կ՚ընդունի սրտին վրրա, վե՛րք գաղտնի,
Որպեսզի ցուրտ սենյակին մեջ չրմրսի
Իր խեղճ մանկիկն որ շատ հիվանդ է անդին,
Կարոտ չրլլա քիչ մը հացի ու միսի,
Որ պուպրրիկ մը ունենա դեթ կաղանդին...
Երբոր տեսնեք հագված, շրքված պերճաշուք
Չքնաղ կիներ ու մանուկներ վարդագույն.
Մի՛ նախանձիք, ո՛վ զրկյալներ, գիտցե՛ք դուք,
Սիրտը նույնն է ամենուրեք, ցավն ալ՝ նույն: